Հավելված N 58
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության
նախարարության գլխավոր քարտուղարի
2025 թվականի սեպտեմբերի 25-ի N 745-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) շուկայի հետազոտության և զարգացման վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետ (ծածկագիրը՝ **24-32.4-Ղ3-2**)

1.2. Ենթակա և հաշվետու է

Վարչության պետն անմիջական ենթակա և հաշվետու է Նախարարին:

1.3. Ենթակա և հաշվետու պաշտոններ

Վարչության պետին անմիջական ենթակա և հաշվետու են Վարչության աշխատողները:

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության պետի տեղակալը կամ գլխավոր մասնագետներից մեկը:

1.5. Աշխատավայրը

ՀՀ, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Վ. Սարգսյան 3/3

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

Գործառույթները՝

1) Ապահովում է Հայաստանի Հանրապետության և միջազգային տեխնոլոգիական շուկաների ուսումնասիրության և վերլուծությունների իրականացումը.
2) Ապահովում է բարձր տեխնոլոգիական ոլորտում հայկական կազմակերպությունների կարողությունների (արտադրանքի, ծառայությունների) գնահատումը.
3) Ապահովում է բարձր տեխնոլոգիական արտադրանքի ու ծառայությունների վաճառքի շուկաների պահանջների, պահանջարկի և արտադրանքի համապատասխանության հետազոտումը.
4) Ապահովում է բարձր տեխնոլոգիական ոլորտում հաճախորդների կարիքների գնահատումը և համագործակցության զարգացմանն ուղղված աշխատանքների իրականացումը.
5) Ապահովում է բարձր տեխնոլոգիական արտադրանքի ու ծառայությունների վաճառքի, եկամտաբեր գործարքների խթանման աշխատանքների իրականացումը.
6) Ապահովում է բարձր տեխնոլոգիաների ոլորտում ինովացիոն կարողությունների զարգացման և ոլորտը միջազգային գործընթացներում ներգրավման, ինչպես նաև հայկական տեխնոլոգիական զարգացման գործունեություն իրականացնող

ընկերությունների գլոբալացման խթանումը.

7) Ապահովում է բարձր տեխնոլոգիաների ոլորտում հայկական կազմակերպությունների կարողությունների գնահատման և հայրենական արտադրության՝ բարձր տեխնոլոգիաների արտաքին և ներքին շուկաներ դուրս բերելու կառուցակարգերի մշակման աշխատանքների իրականացումը.
8) Ապահովում է Հայաստանի Հանրապետությունում համաշխարհային առաջատար տեխնոլոգիական ընկերությունների մասնաճյուղերի ստեղծման խթանումը.
9) Ապահովում է բարձր տեխնոլոգիական ոլորտի խթանման նպատակով՝ ոլորտային միջոցառումների (ցուցահանդեսներ, գործարար համաժողովներ, կոնֆերանսներ և այլն) կազմակերպումը՝ Նախարարության հիմնական և աջակցող մասնագիտական ստորաբաժանումների ներգրավմամբ.
10) Ապահովում է ոլորտային խորհրդատվության, գործնական առաջարկների տրամադրումը՝ տեղական և միջազգային շուկաներում վաճառքի խթանման, եկամտաբեր գործարքների իրականացման նպատակով.
11) Ապահովում է մասնակցություն բարձր տեխնոլոգիաների ոլորտում միջազգային համագործակցության և զարգացման, ինովացիոն տեխնոլոգիաների ոլորտում քաղաքականության մշակման և իրականացման աշխատանքներին.
12) Ապահովում է մասնակցություն տեխնոլոգիական ընկերությունների գործունեության աջակցությանն ուղղված աշխատանքներին.
13) Ապահովում է մասնակցություն տեխնոլոգիական գործունեության արդյունքների առևտրայնացման քաղաքականության մշակման աշխատանքներին.
14) Ապահովում է մասնակցություն բարձր տեխնոլոգիական արտադրանքի ու ծառայությունների վաճառքի իրականացման գործարար ծրագրերի և ռազմավարության մշակման աշխատանքներին.
15) Ապահովում է մասնակցություն բարձր տեխնոլոգիական արտադրանքի ու ծառայությունների վաճառքի թիմերի ձևավորման և ղեկավարման աշխատանքներին.
16) Ապահովում է մասնակցություն բարձր տեխնոլոգիական ոլորտում վաճառքի ներկայացուցչությունների աշխատանքի մոնիթորինգին.
17) Ապահովում է մասնակցություն ոլորտային վերապատրաստման և փորձի փոխանակման ծրագրերին.
18) Ապահովում է ծրագրային բյուջետավորման ձևաչափով ոլորտի տվյալ բյուջետային տարվա՝ ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում պահանջող ծրագրերի (միջոցառումներ) վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը:

Իրավունքները՝

1) Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, ոլորտային կազմակերպություններից պահանջել և ստանալ անհրաժեշտ տեղեկությունները.
2) Ներկայացնել առաջարկություններ ծրագրային բյուջետավորման ձևաչափով ոլորտի տվյալ բյուջետային տարվա՝ ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում պահանջող ծրագրերի (միջոցառումներ) վերաբերյալ.
3) Վարչությանը վերապահված խնդիրների և գործառույթների վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել Նախարարին, Նախարարի՝ ոլորտը համակարգող տեղակալին և Գլխավոր քարտուղարին.
4) Վարչության առջև դրված գործառույթների իրականացման հետ կապված՝ հրավիրել խորհրդակցություններ՝ դրանց մասնակից դարձնելով

համապատասխան մարմինների պաշտոնատար անձանց, մասնագետների և փորձագետների:

Պարտականությունները՝

1) Հետևել ՀՀ և միջազգային տեխնոլոգիական շուկաների ուսումնասիրության և վերլուծության գործընթացներին.
2) Մշակել բարձր տեխնոլոգիական ոլորտում հայկական կազմակերպությունների կարողությունների գնահատման և դրանք արտաքին ու ներքին շուկաներ դուրս բերելու մեխանիզմները.
3) Հաստատել բարձր տեխնոլոգիական արտադրանքի ու ծառայությունների վաճառքի խթանման ռազմավարությունները և ծրագրերը.
4) Ամփոփել հաճախորդների կարիքների գնահատման և համագործակցության զարգացման վերաբերյալ զեկույցները՝ հիմնվելով մասնագետների կողմից ներկայացված տվյալների վրա.
5) Ներկայացնել և պաշտպանել ոլորտի բյուջետային առաջարկությունները ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորման համար.
6) Հետևել բարձր տեխնոլոգիական արտադրանքի ու ծառայությունների վաճառքի շուկաների պահանջների, պահանջարկի և արտադրանքի համապատասխանության հետազոտությունների իրականացմանը.
7) Հետևել տեղական և միջազգային շուկաներում վաճառքի խթանման, եկամտաբեր գործարքների իրականացման համար անհրաժեշտ ոլորտային խորհրդատվության տրամադրմանը.
8) Ղեկավարել բարձր տեխնոլոգիաների ոլորտում հայկական ընկերությունների գլոբալացմանը և ոլորտը միջազգային գործընթացներում ներգրավմանը նպաստող ծրագրերը.
9) Ղեկավարել ոլորտային միջոցառումների կազմակերպման գործընթացը՝ Նախարարության համապատասխան ստորաբաժանումների հետ համագործակցությամբ:

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն:

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տնտեսագիտության կամ միջազգային կապերի (հարաբերությունների) կամ ճարտարագիտության կամ հասարակական և հարակից գիտությունների բնագավառներում չորս տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում

6. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Ժամանակի կառավարում
3. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
4. Փաստաթղթերի նախապատրաստում
5. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
6. Փոփոխությունների կառավարում
7. Բողոքների բավարարում

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի մեկ ոլորտի համար իրավասու կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունների շրջանակը

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի մեկ ոլորտի համար իրավասու կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի գերատեսչական մակարդակում աշխատանքների կազմակերպման և քաղաքականության իրականացման ապահովման և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ՝ հանդես է գալիս պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ ներկայացնելով համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը և մարմինը:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային ստորաբաժանման խնդիրները և դրանց տալիս լուծումներ: